

ՈՐՈՇՈՒՄ

ԱՊՅ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԵՅՍՈՒՆՈՒՄԻ ԱՎԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆՈՒՆՈՒՄԻ ԱՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ  
(1-ին մաս)

Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների  
խորհուրդը որոշեց՝

1. Հաստատել ԱՊՅ մասնակից պետությունների տարածքների սեյսմոլոգիական  
մոնիտորինգի համակարգի ստեղծման Միջպետական գիտատեխնոլոգիական ծրագիրը  
(կցվում է):

2. Հանձնարարել Համագործակցության մասնակից պետությունների  
Կառավարություններին՝ մշակել եւ իրականացնել նշված միջպետական ծրագրի  
իրագործման միջոցառումները:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում այն ստորագրած պետությունների՝ դրա  
ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին  
երրորդ ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած պետությունների  
համար Որոշումն ուժի մեջ է մտնում նշված ընթացակարգերը կատարելու մասին  
ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1998 թվականի նոյեմբերի 25-ին, մեկ  
քննարկում, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների  
Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Որոշումը  
ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի Որոշման հաստատված պատճենը:

Հավելված  
Հաստատված է ԱՊՅ  
Կառավարությունների ղեկավարների  
խորհրդի 1998 թվականի նոյեմբերի  
25-ի որոշմամբ

ԱՊՅ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԱԾԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՊՅ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՏԵԽՆՈՒՆՈՒՄԻ ԱՎԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՊՅ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԵՅՍՈՒՆՈՒՄԻ ԱՎԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆՈՒՆՈՒՄԻ ԱՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ (ՍՄՀ ՄԳՏԾ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՊՅ մասնակից պետությունների տարածքների սեյսմիկ մոնիտորինգի համակարգի  
ստեղծման Միջպետական գիտատեխնոլոգիական ծրագիրը (ՍՄՀ ՄԳՏԾ) (այսուհետ՝ Ծրագիր)  
հանդիսանում է մի շարք փաստաթղթերի արդյունք, որոնք սահմանում են ԱՊՅ մասնակից  
պետությունների սեյսմավտանգ տարածաշրջանների սեյսմոլոգիական մոնիտորինգի  
միջպետական համակարգի (ՍՄՄՀ) ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքների  
բովանդակությունը, մեթոդաբանության հիմքերը, նպատակները եւ խնդիրները: Ծրագրի  
հետ մեկտեղ այդ փաստաթղթերը ներառում են ԱՊՅ մասնակից պետությունների  
տարածքների սեյսմոլոգիական մոնիտորինգի միջպետական համակարգի դոկտրինան եւ  
հայեցակարգը՝ պատրաստված 1995 եւ 1996 թվականներին, ինչպես նաեւ կյուլթեր,  
որոնք վերաբերում են երկրաշարժերի կանխատեսման եւ սեյսմիկ դիտարկումների  
դաշնային համակարգի (ՌԴ ՄԴԴՀ) ռուսական դաշնային նպատակային ծրագրին (ԴՆԾ) եւ

ԱՊՅ մասնակից պետությունների սեյսմիկ ցանցերի զարգացման ազգային ծրագրերին: Դոկտորինան եւ հայեցակարգը նվիրված են ՍՄՄՅ ստեղծման անհրաժեշտության հիմնավորմանը, բացահայտում են աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրները, տալիս են դրանց մեթոդաբանության հիմքերի եւ այն աշխատանքների բովանդակության հակիրճ բնութագիրը, որոնք պլանավորված են 1998-2001թթ.: Ստորեւ շարադրված Ծրագրում համակարգված են ՍՄՄՅ դոկտորինայի եւ հայեցակարգի իրագործմանն ուղղված հիմնական միջոցառումները, սահմանված են աշխատանքների ժամկետները եւ անհրաժեշտ ֆինանսավորման ծավալները:

Առաջարկված Ծրագրի առանձին բաժիններ կարող են զարգացվել ու կոնկրետացվել ինչպես միջոցառումների բովանդակության, այնպես էլ դրանց կատարման փուլերի առումով: Այդ աշխատանքը պետք է կատարվի բնական եւ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների միջպետական խորհրդին կից՝ սեյսմոլոգիայի եւ սեյսմակայուն շինարարության փորձագիտական խորհրդին առընթեր սեյսմիկ սարքավորումների, տեղեկատվական համակարգերի, սեյսմիկ վտանգի գնահատման եւ երկրաշարժերի կանխատեսման մեթոդաբանության աշխատանքային խմբերի մասնակցությամբ, որոնք ներառում են ԱՊՅ մասնակից պետությունների ներկայացուցիչներին: Ծրագրի ուղղությամբ տարվող համատեղ աշխատանքների մասնակիցների կազմը որոշված է նախապես եւ միայն առանձին գերատեսչությունների, նախ եւ առաջ՝ գիտությունների ազգային ակադեմիաների մակարդակով, որոնք աջակցել են ՍՄՄՅ դոկտորինային ու հայեցակարգին եւ հաստատել են իրենց համաձայնությունը՝ մասնակցելու ՍՄՄՅ ստեղծման գործընթացին: Դրանց թվում՝ Ադրբեջանի Զանրապետության, Զայաստանի Զանրապետության, Բելառուսի Զանրապետության, Վրաստանի, Ղազախստանի Զանրապետության, Ղրղզստանի Զանրապետության, Մոլդովայի Զանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Զանրապետության, Թուրքմենստանի, Ուզբեկստանի Զանրապետության եւ Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիաների երկրաֆիզիկայի եւ սեյսմոլոգիայի ինստիտուտները, ինչպես նաեւ մի շարք երկրների արտակարգ իրավիճակների ազգային գերատեսչությունները:

ՍՄՄՅ ստեղծման խնդրի արդիականությունը բացատրվում է հետեւյալ գործոններով:

Երկրաշարժերն իրենց կործանիչ հետեւանքներով եւ մարդկային զոհերի քանակով բնական աղետների շարքում գրավում են առաջին տեղերից մեկը: Մի շարք երկրներում դրանց հետեւանքները կարող են զգացվել տասնամյակներ շարունակ եւ կլանել ազգային բյուջեի զգալի մասը: Նշանակալի սեյսմիկ վտանգի են ենթակա նաեւ գրեթե բոլոր ԱՊՅ մասնակից պետությունների ընդարձակ տարածքները, որոնք տեկտոնական առումով իրենցից ներկայացնում են երեք խոշոր՝ եվրասիական, արաբական եւ հինդոստանական լիթոսֆերային սալերի երկրադինամիկական փոխազդեցության ասպարեզ:

Սույն Ծրագիրն արտացոլում է սեյսմոլոգիական դիտարկումների եւ սեյսմիկ վտանգի կանխատեսման բնագավառում մասնագետների եւ գիտնականների ինչպես միջպետական, այնպես էլ շահագրգիռ կազմակերպությունների մակարդակով փոխգործողությունների հետագա զարգացման կառուցողական սկզբունքը եւ համակարգված ձեւով իրագործում է արդեն մասամբ մշակված դրույթները: Այն սահմանում է ՍՄՄՅ ստեղծման հիմնական միջոցառումները:

Սեյսմավտանգ տարածաշրջանների սեյսմոլոգիական մոնիտորինգի միջպետական համակարգի մշակման գլխավոր նպատակը հետեւյալն է.

երկրաշարժերի կանխատեսման եւ սեյսմիկ ակտիվության մոնիտորինգի համար ազգային դիտացանցերի սարքավորամեթոդական հագեցվածության միասնականացում, տեղեկատվական ապահովման ինտեգրացում՝ սեյսմիկ վտանգի համարժեք գնահատման եւ ուժեղ երկրաշարժերի կործանիչ հետեւանքների կանխման համար նախազգուշական միջոցների ձեռնարկման նպատակով,

երկրաշարժերի կանխատեսման եւ սեյսմիկ վտանգի գնահատման հուսալի մեթոդների եւ մեթոդաբանության հիմքերի զարգացում:

Դիտարկվող հիմնահարցի հետ կապված հիմնական խնդիրները ներառում են հետեւյալ բաժինները.

երկարաժամկետ սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդաբանության մշակում եւ ԱՊՅ մասնակից պետությունների տարածքի եւ հարակից տարածաշրջանների ընդհանուր

դիւստիւստ սեյսմիկ շրջանայնացման քարտեզի ստեղծում՝ որպէս սեյսմակայուն շինարարութեան եւ ռացիոնալ հողօգտագործման համար ազգային նորմատիվ փաստաթղթերի վերամշակման հիմք,

օգտակար հանածոների հանքավայրերի արդյունաբերական մշակման եւ խոշոր հիդրոտէխնիկական շինարարութեան շրջանների համար տեխնածին երկրաշարժերի ծագման վտանգի գնահատման, կանխատեսման եւ մոնիտորինգի մեթոդաբանութեան մշակում,

երկրաշարժերի կանխատեսման եւ բնակչութեան սեյսմանվտանգութեան ապահովման, հնարավոր երկրաշարժերից պոտենցիալ կորուստների եւ վնասի գնահատման մեթոդների մշակում,

սեյսմամետրիկ դիտակետերի ու կայանների ցանցի օպտիմիզացում եւ դրանց ապահովում միատիպ չափիչ սարքավորումներով, սեյսմիկ դիտարկումների միջպետական ինտեգրացված համակարգի ստեղծում,

համատեղ Էպիկենտրոնական գիտարշավների կազմակերպում՝ օջախային գոտիներում սեյսմաերկրադինամիկական գործընթացների զարգացմանը հետեւելու եւ ուժեղ երկրաշարժերի հետեւանքներն ուսումնասիրելու համար:

Դիտարկվող հիմնահարցերին առնչվող հիմնական խնդիրներին համապատասխան, ինչպէս նաեւ ՍՄՄՅ ստեղծման դոկտորինայի եւ հայեցակարգի դրույթների իրագործման նպատակով սույն Ծրագիրը բաժանված է չորս ենթածրագրերի (հավելված 1):

I ենթածրագիր. Երկրաշարժերի կանխատեսման եւ սեյսմիկ ակտիվութեան մոնիտորինգի համար ընդհանուր սարքավորումամեթոդական տարածքի ստեղծում:

II ենթածրագիր. Սեյսմիկ վտանգի կանխատեսումն ապահովելու համար ընդհանուր տեղեկատվական տարածքի ստեղծում:

III ենթածրագիր. Սեյսմիկ վտանգի գնահատման եւ երկրաշարժերի կանխատեսման հուսալի մեթոդների մշակման համար ընդհանուր գիտամեթոդական տարածքի ստեղծում:

IV ենթածրագիր. Գիտակազմակերպական միջոցառումներ:

ՍՄՅ ՄԳՏԾ իրագործումը կատարվում է ԱՊՅ մասնակից պետությունների Կառավարությունների եւ տնտեսական միության միջպետական տնտեսական կոմիտէի (ՄԿԿ) հովանու ներքո, գիտատեխնոլոգիական զարգացման միջպետական կոմիտէի (ԳՏՁ ՄԿ) կազմակերպչական դերով: Ծրագրի մասնակիցների գործողությունների անմիջական համակարգումն իրականացնում է բնական եւ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների միջպետական խորհուրդը (ԱԻ ՄՊԻ):

ԱԻ ՄՊԻ-ին առընթեր սեյսմոլոգիայի եւ սեյսմակայուն շինարարութեան փորձագիտական խորհուրդը պարբերաբար տեղեկացնում է ԳՏՁ ՄԿ-ին Ծրագրի իրագործման ընթացքի մասին: Նշված տեղեկությունները հաշվի են առնվում նրա՝ ՄԿԿ-ին տրվող ամենամյա զեկույցներում՝ նկատված թերությունները եւ Ծրագրի, ինչպէս ամբողջությամբ, այնպէս էլ ազգային (ԱՊՅ մասնակից պետությունների) բաժինների, իրագործման միջոցառումների պլանների ու ժամանակացույցերի հնարավոր խախտումները վերացնելու ուղղությամբ առաջարկություններ անելու համար:

Ծրագրի մշակման ընդհանուր ղեկավարումն իրականացրել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (ՌԳԱ) ակադեմիկոս Վ.Ն. Ստրախովը: Նա է կատարել նաեւ Ծրագրի վերջնական խմբագրումը, որը պատրաստվել է ՌԳԱ երկրի ֆիզիկայի միավորված ինստիտուտի (ԵՖՄԻ) աշխատակիցներ՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Մ.Վ. Նեւսկու, ՌԳԱ թղթակից անդամ Գ.Ա. Սոբոլեւի, ՌԳԱ երկրաֆիզիկայի ծառայութեան տնօրէն Օ.Ե. Ստարովոյտի, Ռեգիոնալ Ռուսաստանի Զանրապետութեան գիտությունների ակադեմիայի (ՌԻԶ ԳԱ) թղթակից անդամ Վ.Ի. Ռիլմովի եւ ՌԳԱ ԵՖՄԻ լաբորատորիայի վարիչ Տ.Պ. Բելոուսովի կողմից: Նրանց հետ միասին ՍՄՅ ՄԳՏԾ մշակմանը մասնակցել են ԱԻ ՄՊԻ-ին առընթեր փորձագիտական խորհրդի անդամներ՝ Ռուսաստանի Դաշնութեան բնական գիտությունների ակադեմիայի (ՌԴ ԲԳԱ) թղթակից անդամ Մ.Ա. Շահրամանյանը եւ տեխնիկական գիտությունների թեկնածու Գ.Մ.

Նիզմետովը: Ծրագրի նախապատրաստմանը մեծապէս նպաստել են ՍՄՅ ՄԳՏԾ ձեւավորման եւ իրագործման աշխատանքային խմբի անդամներ՝ ԱՊՅ մասնակից պետությունների ներկայացուցիչները՝ Ադրբեջանի Զանրապետութեան գիտությունների ակադեմիայի փորձարարամեթոդական երկրաֆիզիկական արշավախմբի (ԱՅ ԳԱ ՓՄԵԱ) ղեկավար, երկրահանքային գիտությունների դոկտոր Ա.Գ. Զասանովը, Զայաստանի Զանրապետութեան

սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության պետ, տեխնիկական գիտությունների դոկտոր Ս.Յու.Բալասանյանը, Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ա.Գ. Արոնովը, Վրաստանի գիտությունների ակադեմիայի (ՎԳԱ) երկրաֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, ՎԳԱ թղթակից անդամ Տ.Լ. Չելիձեն, Ղազախստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի, գիտությունների նախարարության (ԳԱ, ԳՆ) սեյսմոլոգիայի ինստիտուտի տնօրեն, Ղազախստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի (ՂՀ ԳԱ) թղթակից անդամ Ա.Կ. Կուրսկեյեը, Ղրղզստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ՂՀ ԳԱԱ) սեյսմոլոգիայի ինստիտուտի տնօրեն, ՂՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Տ. Տուրդուկուլովը, Սոլոդկայի Հանրապետության գիտությունների ակադեմիայի (ՄՀ ԳԱ) երկրաֆիզիկայի եւ երկրաբանության ինստիտուտի տնօրեն, ՄՀ ԳԱ ակադեմիկոս Ա.Վ. Դրումյան, Տաջիկստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի (ՏՀ ԳԱ) սեյսմոլոգիայի եւ սեյսմիկ շինարարության ինստիտուտի տնօրեն, ՏՀ ԳԱ ակադեմիկոս Ս.Խ. Նեգմատուլլաեւը, Թուրքմենստանի գիտությունների ազգային ակադեմիայի (ԹԳԱԱ) սեյսմոլոգիայի ինստիտուտի տնօրեն, ԹԳԱԱ թղթակից անդամ Տ.Ա. Աշիրովը, Ուզբեկստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի (ՈւՀ ԳԱ) սեյսմոլոգիայի ինստիտուտի տնօրեն, ՈւՀ ԳԱ թղթակից անդամ Կ.Ն. Աբդուլաբեկովը, Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի (ՈւԳԱԱ) երկրաֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, ՈւԳԱԱ թղթակից անդամ Օ.Մ. Խարիտոնովը: Ծրագրի մշակման ընթացքում եապես օգնել են նաեւ ՄՏԿ եւ ՊՏՁ ՄՊ ներկայացուցիչները:

ՄԱՀ ՄԳՏԾ իրագործման ուղղությամբ տարվելիք աշխատանքների եւ հիմնական ենթածրագրերի համառոտ հիմնավորումը պարունակում են սույն փաստաթղթի հետեւյալ բաժինները.

**1. ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿՏԱՆԳ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՍԵՅՍՄՈՆԻՏՈՒՄԻ ԱՆՍԻՏՈՒՄԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ՄՄՀ) ԵՎ ՍԵՅՍՄԻԿ ԿՏԱՆԳԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԱՐԱԾԵԻ ԱՏԵՂԾՈՒՄԸ**

Վերջին տարիներին ԱՊՀ մասնակից պետությունների տարածքների սեյսմիկ

դիտարկումների համակարգում ստեղծվել է բավական տազնապալի վիճակ: Անհրաժեշտ ֆինանսավորման բացակայության, բարոյապես մաշված սարքավորումների եւ որակյալ կադրերի կորստի պատճառով ԱՊՀ մասնակից պետությունների մեծ մասում դիտարկման ցանցը, որը բաղկացած է հարյուրավոր ամրակայված սեյսմիկ կայաններից, շատ արագ անկում ապրեց: Այն ժամանակ, երբ սեյսմիկ դիտակայանների քանակը աշխարհի տարբեր երկրներում շարունակում է աճել եւ կատարելագործվել՝ ապահովելով տեղեկատվությամբ սեյսմակայուն շինարարության եւ շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ տարվող սեյսմիկ եւ կիրառական հետազոտությունները, ԱՊՀ մասնակից պետությունների արտակարգ սեյսմակտիվ շրջաններում սեյսմիկ կայանները մեկը մյուսի հետեւից դադարեցնում են իրենց աշխատանքը: Դժվար է գերազնահատել դրա հետ կապված բացասական հետեւանքները, իսկ դրա ամենաթարմ օրինակը 1995թ. Նեֆթեգորսկի աղետալի երկրաշարժից քիչ առաջ Սախալինի սեյսմիկ կայանների փակումն է:

**ՄՄՀ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԱՊՀ մասնակից պետություններում դիտարկումային սեյսմոլոգիայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս բնագավառում աշխատանքների ժամանակակից մակարդակի հասնելու եւ ուժեղ երկրաշարժերի գոտիներում ապրող բնակչության անվտանգությունն ապահովելու համար առաջնակարգ խնդիրներ են սեյսմոլոգիական մոնիտորինգի միջպետական համակարգի ստեղծումը եւ սեյսմիկ վտանգի կանխատեսումը, ինչպես նաեւ սեյսմաչափումների, համակարգչային տեխնոլոգիայի եւ կապի հեռահաղորդակցային համակարգերի նորագույն նվաճումների հիման վրա ժամանակակից

ազգային սեյսմիկ ցանցերի ստեղծումը: Այդ աշխատանքը պետք է կատարվի հետևյալ ուղղություններով.

սեյսմիկ կայանների տեխնիկական վերազինում ժամանակակից թվային սարքավորումներով՝ դիտարկումներ կատարելու եւ տվյալները կապի միջոցներով հաղորդելու համար,

լավագույն սեյսմիկ դիտացանցերի ստեղծում,

հաշվիչ տեխնիկայի եւ կապի ժամանակակից միջոցներով հագեցած տեղեկատվության մշակման կենտրոնների ցանցի ստեղծում,

սեյսմիկ ցանցերի գործունեության մեթոդական, մաթեմատիկական եւ ծրագրային ապահովման ստեղծում ու կատարելագործում,

ՄՄՄՀ համակարգված համատեղ գործունեության ու զարգացման եւ սեյսմիկ վտանգի կանխատեսման կազմակերպում՝ ուժեղ երկրաշարժերի ազդեցությունից ԱՊՀ մասնակից պետությունների տարածքների եւ օբյեկտների սեյսմիկ անվտանգությունն ու պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Սեյսմիկ կայանների տեխնիկական վերազինման, տեղեկության մշակման կենտրոնների ստեղծման, տվյալների փոխանակման համար հեռահաղորդակցական համակարգերի կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքներ ծավալելիս սկզբունքային է հանդիսանում տեխնիկական միջոցների միասնականացված համալիրների ստեղծումը:

ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում ՄՄՄՀ հիմնական խնդիրներն են.

ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում սեյսմիկ վիճակի նկատմամբ հեռասեյսմիկ, տեղային եւ տարածաշրջանային անընդհատ դիտարկումների կազմակերպումը եւ անցկացումը,

ԱՊՀ մասնակից պետությունների տարածքների սեյսմոլոգիական դիտարկումների եւ սեյսմիկ վտանգի կանխատեսման տվյալների ազգային շտեմարանների ստեղծումը եւ վարումը՝ ապահովելով համապատասխան տարածքների սեյսմիկ ակտիվության բնույթի մասին տվյալների օպերատիվ փոխադարձ փոխանակումը,

ԱՊՀ մասնակից պետությունների կառավարական մարմիններին եւ սեյսմավտանգ շրջաններում տեղակայված գործադիր իշխանության մարմիններին համապատասխան տարածքում  $M \geq 3,5$  մագնիտուդայով եւ արտասահմանում  $M \geq 5,0$  մագնիտուդայով երկրաշարժերի տեղի, ժամանակի եւ հաճախականության մասին տեղեկատվությամբ օպերատիվ ապահովումը,

ՄՄՄՀ ամփոփիչ քարտագրացուցակի եւ ազգային սեյսմոլոգիական տեղեկագրերի քարտագրացուցակների պարբերաբար հրատարակումը,

գիտությունների ազգային ակադեմիաներում տարվող գիտական հետազոտությունները սեյսմոլոգիական դիտարկումների տվյալներով ապահովումը՝ երկրաֆիզիկայի հիմնախնդիրները լուծելու համար,

միջպետական սեյսմոլոգիական նախագծերում եւ սեյսմոլոգիական դիտարկումների գլոբալ համակարգում ԱՊՀ մասնակից պետությունների մասնակցության ապահովումը:

Դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է կատարել սեյսմիկ կայանների, տվյալների հավաքման եւ մշակման կենտրոնների զարգացման ու տեխնիկական արդիականացման աշխատանքներ եւ շահագործման հանձնել տեղեկության փոխանցման հեռահաղորդակցության համակարգեր:

Սեյսմոլոգիական դիտարկումները պետք է կազմակերպվեն երեք մակարդակի ցանցերում՝ միջպետական (հեռասեյսմիկ), ազգային (տարածաշրջանային) եւ տեղական:

Սեյսմիկ ցանցի կազմի մեջ (անկախ մակարդակից) մտնում են հետևյալ բաղադրիչները՝ սեյսմիկ կայաններ, տվյալների հավաքման եւ մշակման կենտրոններ, տվյալների հաղորդման ուղիներ: Բոլոր երեք մակարդակի ցանցերը պետք է լինեն փոխկապակցված եւ լրացնեն միմյանց: Այսպես՝ հեռասեյսմիկ ցանցի որոշ կայաններ կարող են միաժամանակ հանդիսանալ տարածաշրջանային ցանցի կայաններ, իսկ տարածաշրջանային ցանցի կայանների տվյալները կարող են մշակվել հեռասեյսմիկ ցանցի տվյալների մշակման կենտրոնում եւ այլն:

Տեղային դիտարկումներն անցկացվում են 100x100 կմ կարգի տարածության վրա, ավելի հաճախ ընդգրկում են կանխատեսման փորձակայաններ եւ ապահովում են սկսած

M = 2,0 եւ ավելի մագնիտուդային սեյսմայնության ուսումնասիրությունները:

Ռուսաստանի տարածաշրջանային ցանցերը հիմնականում տեղակայված են Կամչատկայի, Սախալինի, Յուրիսային Կովկասի, Բայկալի եւ այլ նմանատիպ սեյսմակտիվ տարածաշրջաններում: Դրանք ընդգրկում են մոտավորապես 1000x1000 կմ մակերեսով տարածություններ եւ գրանցում են 3,0 եւ ավելի մագնիտուդային երկրաշարժերը: ԱՊՅ մյուս մասնակից պետություններում տարածաշրջանային մակարդակի սեյսմիկ ցանց փաստորեն հանդիսանում է ազգային սեյսմիկ ցանցը, որի կազմի մեջ, բացի տարածաշրջանայինից, մտնում են սեյսմիկ կայանների տեղային խմբերը:

Յեռասեյսմիկ ցանցը վարում է դիտարկումներ ԱՊՅ մասնակից պետությունների բոլոր տարածքներում՝ սկսած 4,0 եւ ավելի մագնիտուդային մակարդակից: Այն ապահովում է ԱՊՅ մասնակից պետությունների սեյսմայնության մոնիտորինգը, մտնում է գլոբալ սեյսմիկ դիտարկումների համակարգի մեջ եւ այդ պատճառով կարող է դիտվել որպես ԱՊՅ մասնակից պետությունների միջպետական հեռասեյսմիկ ցանց:

#### ՄՄՄ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

ՄՄՄ գործունեության սկզբունքները հիմնվում են՝

բաղադրիչ դիտացանցերի եւ ամբողջ համակարգի գործունեության ռեժիմների եւ այդ ռեժիմների փոփոխության պայմանների սահմանման վրա,

սեյսմոլոգիական դիտարկումների ցանցերում եւ ամբողջ համակարգում տեղեկության հավաքման եւ մշակման միասնականացված կարգի, դիտարկումների արդյունքների մատչելիության ապահովման եւ դրանց ազատ տարածման հիմնական դրույթների սահմանման վրա,

երկրաշարժերի միջին ժամկետային ու կարճաժամկետ կանխատեսումների տվյալներով տարածաշրջանների սեյսմիկ վտանգի եւ տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի պայմաններում համակարգի գործունեության առանձնահատկությունների սահմանման վրա:

#### ՄՄՄ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՅՆՎՈՒՄԸ

ՄՄՄ կազմում սեյսմոլոգիական դիտարկումների ցանցերի գործունեության տեխնիկական ապահովումը եւ տեղեկատվական ապահովումը զարգացման առաջնայնությամբ հանդիսանում են իրավահավասար: Ընդ որում, տեղեկատվական ապահովման միջոցների եւ մեթոդների ստեղծումը կարող է կատարվել որոշ առաջընթացով:

Տեխնիկական ապահովմանն են վերաբերում՝

դիտացանցերի սեյսմիկ կայանների սարքավորումները,

կայաններում դիտարկումների արդյունքների մշակման եւ տվյալների փոխանցման միջոցները,

դիտացանցերի տեղեկատվության մշակման կենտրոնները տվյալների հավաքման եւ փոխանցման միջոցներով սարքավորելը՝ ՄՄՄ կազմում դրանց համատեղ գործունեության իրականացման համար:

Տեխնիկապես ապահովման զարգացման սկզբունքային ուղղությունն է համարվում կայանների եւ մշակման կենտրոնների վերազինումը ստանդարտ միասնականացված թվային սարքավորումներով եւ միջհամակարգչային կապի միջոցներով:

Տեղեկատվական ապահովմանն են վերաբերում՝

ՄՄՄ տեղեկատվահեռահաղորդակցական համակարգը, տվյալների, հաղորդագրությունների, զեկույցների, հարցումների ձեւաչափերը,

ՄՄՄ-ում տվյալների փոխանակում իրականացնելու համար ընդհանուր տեխնիկական եւ ընդհանուր համակարգային ծրագրային ապահովումը եւ տվյալների շտեմարանի գործունեությունը:

ՄՄՄ դիտացանցերի համատեղ գործունեության տեղեկատվական եւ տեխնիկական ապահովման զարգացումը պետք է իրականացվի տեխնիկական եւ ծրագրային միջոցների, տվյալների ձեւաչափերի եւ փոխանակման արձանագրությունների միասնականացման եւ ստանդարտացման մասին համաձայնեցված որոշումների ընդունման միջոցով:

ԱՊՅ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՄՈՒՆՈՒԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ՍԾ ՏՄՄԿ)

ԱՊՅ մասնակից պետությունների սեյսմոլոգիական ծառայությունների տեղեկության մշակման միջպետական կենտրոնը (ՍԾ ՏՄՄԿ) ստեղծվում է ԱՊՅ մասնակից պետությունների սեյսմիկ տվյալների ազգային կենտրոնների, այլ երկրների ազգային սեյսմիկ ծառայությունների եւ տվյալների միջազգային կենտրոնների, Ռուսաստանի Դաշնության արտակարգ իրավիճակների եւ տարերային աղետների հետեւանքների վերացման նախարարության (ՌԴ ԱԻՆ) ճգնաժամային իրավիճակներում կառավարման կենտրոնի (ՃԻԿԿ) հետ ՍՄՄՅ փոխգործունեությունը ապահովելու նպատակով: Կենտրոնը ստեղծվելու է ՌԳԱ երկրաֆիզիկայի ծառայության տեղեկության մշակման կենտրոնի (ՌԳԱ ԵԾ ՏՄԿ) հիման վրա, Օբինսկ քաղաքում:

ՍԾ ՏՄՄԿ-ն իր առջեւ դրված խնդիրները լուծելու համար՝

վարում է ուժեղ երկրաշարժերի մասին շտապ հաղորդագրությունների ծառայություն, օպերատիվ կարգով ապահովում է ԱՊՅ մասնակից պետությունների սեյսմիկ տվյալների ազգային կենտրոններին եւ Ռուսաստանի պետական մարմիններին ԱՊՅ մասնակից պետությունների տարածքում 3,5 եւ ավել մագնիտուդայով եւ արտասահմանում 5,0 եւ ավել մագնիտուդայով երկրաշարժերի տեղի, ժամանակի եւ հաճախականության մասին տեղեկությամբ: Ստեղծում է շտապ հաղորդագրությունների ծառայության տվյալների բազա, որը պարունակում է տեղի ունեցած երկրաշարժերի հիմնական բնութագրերը (ժամանակը, տվյալները եւ օջախի խորությունը, էպիկենտրոնային գոտում եւ շրջակա շրջաններում մագնիտուդան եւ հաճախականությունը՝ բալերով) եւ դրանց հետեւանքների մասին տեղեկություն (շենքերի, օբյեկտների, շինությունների ավերում եւ վնասում, սոցիալական հետեւանքներ եւ այլն): Տվյալների շտեմարան մուտք գործած տեղեկությունը մշտապես ճշգրտվում եւ լրացվում է սեյսմիկ կայաններից եւ տվյալների ազգային կենտրոններից դրա ստացման չափով,

ստեղծում եւ վարում է սեյսմոլոգիական տվյալների միջպետական բանկ, ապահովում է ուղղակի մուտք ԱՊՅ մասնակից պետությունների երկրների տարածքներում սեյսմիկ ակտիվության եւ սեյսմիկ վտանգի բնույթի եւ դրա զարգացման միտումների մասին տեղեկության համար: Տվյալների միջպետական բանկի հիմնական տեղեկությունն են հանդիսանում օպերատիվ եւ ընդհանրացված սեյսմոլոգիական տեղեկագրերը եւ հեռասեյսմիկ ցանցի քարտագրացուցակները: Տվյալների բանկի համալրումը տեղեկությամբ կատարվում է անընդհատ,

ԱՊՅ մասնակից պետություններին օպերատիվ կարգով ապահովում է տեղի ունեցած երկրաշարժերի հետեւանքների մասին տեղեկությամբ,

հրապարակում է սեյսմոլոգիական տեղեկագրեր ու հեռասեյսմիկ ցանցի երկրաշարժերի քարտագրացուցակներ եւ ապահովում է դրանց կանոնավոր տարածումը ԱՊՅ մասնակից պետություններում,

ազգային սեյսմոլոգիական կենտրոնների հետ համաձայնեցնելով՝ մասնակցում է ազգային սեյսմիկ ցանցերի տեխնիկական հագեցվածության արդիականացմանը,

ապահովում է ԱՊՅ մասնակից պետություններում տարվող գիտական հետազոտությունները սեյսմոլոգիական դիտարկումների տվյալներով Երկրագնդի մասին գիտությունների հիմնարար եւ կիրառական խնդիրների լուծման համար,

մասնակցում է հեռասեյսմիկ ցանցով կայանների սեյսմոլոգիական դիտարկումների գլոբալ համակարգի գործունեությանը,

արտասահմանյան սեյսմոլոգիական կենտրոնների հետ կատարում է հեռասեյսմիկ ցանցի տվյալների միջազգային փոխանակման պարտավորությունները:

ՍԾ ՏՄՄԿ տեխնիկական միջոցները, ելլելով իրենց հնարավորություններից, պետք է ապահովեն՝

հեռասեյսմիկ ցանցի 50-60 կայաններից տվյալների հավաքում ու փոխանցում,

10-12 ազգային սեյսմոլոգիական կենտրոններից տվյալների հավաքում ու փոխանցում, տվյալների հավաքումը հեռասեյսմիկ կայաններից պետք է ապահովվի ռեալ

ժամանակի ռեժիմում, տարածաշրջանային կենտրոններից՝ համաձայնեցված կանոնակարգի ռեժիմում՝ ցանկացած ժամանակ ՍՃ ՏՄՄԿ-ից ազգային կենտրոններ եւ հեռաստեյամիկ կայաններ մուտք ունենալու հնարավորությամբ,

անընդհատ եւ օպերատիվ փոխգործունեություն ՍՃ ՏՄՄԿ-ի տվյալների բազայի եւ ԱՊՀ մասնակից պետությունների տվյալների ազգային կենտրոնների միջեւ՝ ռեալ ժամանակի եւ համաձայնեցված կանոնակարգի ռեժիմներում՝ տվյալների փոխանակման առումով,

անհրաժեշտ լրացուցիչ տեղեկության ստացում արտասահմանյան (բացառությամբ ԱՊՀ մասնակից պետությունների) սեյսմոլոգիական կենտրոնների տվյալների բազայից, հարցումով կամ միջհամակարգչային կապով ուղիղ մուտքի մեթոդով, եւ այդ երկրների հետ տվյալների փոխանակման ապահովում,

սեյսմոլոգիական տեղեկատվության միջպետական բանկի ստեղծում, դրա մշտական ընդլայնում եւ համալրում սեյսմոլոգիական տվյալներով,

շտապ հաղորդագրությունների ծառայության ռեժիմում տվյալների մշակում եւ շտապ մշակման արդյունքներով ամփոփագրերի փոխանցում ԱՊՀ մասնակից պետությունների տվյալների ազգային կենտրոն եւ այլ կազմակերպություններ՝ ըստ համաձայնեցված ցանկի,

ԱՊՀ մասնակից պետությունների պատվերների կատարում՝ նրանց սեյսմոլոգիական տվյալներ տրամադրելու առումով:

## 2. ՍԵՅՍՄԻԿ ԿՏԱՆԳԻ ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՅՍՄԻԿ ԸՐՁԱՆԱՅՆԱՑՄԱՆ ԶԱՐԿԵԶԻ ԱՍԵՂԾՈՒՄ

Արտակարգ բարձր սեյսմիկ վտանգը բնորոշ է Հյուսիսային Եվրասիայի համարյա ամբողջ տարածքին, որի սահմաններում տեղակայված են նաեւ ԱՊՀ մասնակից պետությունները, որոնք մշտապես զգում են ուժեղ երկրաշարժերի վտանգը եւ ավերիչ ազդեցությունը: Հազարավոր կիլոմետրեր ձգվածությամբ սեյսմակտիվ տարածաշրջանները միեւնույն պետության տարածքում տեղակայվում են խիստ հազվադեպ: Այդ տարածաշրջաններից յուրաքանչյուրը սովորաբար բնորոշվում է սեյսմաերկրադինամիկական զարգացման միասնությամբ, որն արտահայտվում է մասնավորապես երկրակառուցվածքի որոշակի կարգավորվածությամբ, երկրաշարժերի օջախներով, միգրացիոն գործընթացներով եւ սեյսմիկ ակտիվացմամբ: Հետեւաբար, յուրաքանչյուր տարածաշրջանում սեյսմայնության եւ սեյսմիկ գործընթացների կառուցվածքի համարժեք ուսումնասիրման, ինչպես նաեւ ներտարածաշրջանային եւ միջտարածաշրջանային սեյսմաերկրադինամիկական կապերի բացահայտման համար անհրաժեշտ է լայն միջազգային համագործակցություն:

Երկարատեւ սեյսմիկ վտանգի եւ սեյսմիկ ռիսկի գնահատման առաջին եւ ամենակարեւոր օղակը հանդիսանում է սեյսմիկ շրջանայնացումը /ՍՇ/: Այս բնագավառի հետազոտությունները նպատակ ունեն նույնականացնել սեյսմազարգացող գոտիները, սահմանել դրանց սեյսմիկ ռեժիմի պարամետրերը, իսկ արդյունքում՝ հաշվարկել երկրամակերեւութի վրա դրանց կողմից ստեղծվող սեյսմիկ ազդեցությունը: Հետազոտությունները հիմնվում են երկրակեղեւի ընդերքային կառուցվածքի եւ ամբողջ լիթոսֆերայի, ժամանակակից երկրադինամիկայի, սեյսմատեկտոնիկայի, տարածաշրջանային սեյսմայնության եւ ինժեներային սեյսմոլոգիայի մանրամասն եւ համալիր ուսումնասիրման վրա: Դրանք միավորում են սեյսմոլոգիայի եւ Երկրի մասին այլ գիտությունների բնագավառի մասնագետներին՝ նախագծող ինժեներների եւ տարբեր մասնագիտացմամբ շինարարների հետ միասին:

Կախված հետազոտությունների խնդիրներից, մանրամասնության աստիճանից եւ ծավալներից՝ սեյսմիկ շրջանայնացումը կարող է լինել ընդհանուր (ԸՍՇ, 1:5000000-1:2500000 մասշտաբով), դետալային (ԴՍՇ, 1:500000-1:100000 մասշտաբով) եւ միկրոսեյսմիկ (ՄՍՇ, 1:50000 եւ ավելի խոշոր մասշտաբով): Սակայն հետագա բոլոր աշխատանքների համար առաջնային եւ հիմնարար է հանդիսանում ԸՍՇ-ն՝ հիմնված տարածաշրջանային եւ միջտարածաշրջանային սեյսմոլոգիական եւ



երկրաբանաերկրաֆիզիկական հետազոտությունների վրա, որոնք նպաստում են լիթոսֆերային սալերի եւ սեյսմակտիվ տարածաշրջանների երկրակեղեւի խոշոր բլոկների պլանետարային սեյսմաերկրադինամիկական փոխգործողության բացահայտմանը:

ՍՇ լիարժեք քարտեզի ստեղծման հիմնահարցը արդիական է, առանց բացառության, բոլոր ԱՊՀ մասնակից պետությունների համար, որոնց սեյսմակտիվ տարածաշրջանները մշտապես ենթակա են սեյսմիկ վտանգի: ՍՇ նորմատիվ քարտեզների հիման վրա իրականացվում են սեյսմակայուն շինարարություն, ռացիոնալ հողօգտագործում եւ պետական մակարդակով երկարաժամկետ սոցիալ-տնտեսական պլանավորում, գնահատվում է ժողովրդական տնտեսության սեյսմիկ խոցելիությունը եւ ուժեղ երկրաշարժերի ավերիչ հետեւանքներից հնարավոր վնասը: Միաժամանակ սեյսմիկ շրջանայնացման քարտեզների հուսալիությունը ամենաամիջական ձեւով կախված է ելակետային սեյսմոլոգիական եւ սեյսմատեկտոնական նյութի եւ սեյսմիկ վտանգի գնահատման ընդունված մեթոդաբանության որակից եւ հավաստիության աստիճանից:

Մի ամբողջ շարք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով, այդ թվում՝ նախկին հետազոտությունների մեթոդաբանական եւ տեխնիկական թերությունների հետեւանքով, նախկին ԽՍՀՄ տարածքի՝ 1978թ. ընդհանուր սեյսմիկ շրջանայնացման վերջին նորմատիվ քարտեզը (ԸՍՇ-78) չդիմացավ նույնիսկ համեմատաբար կարճ փորձաշրջանի: Վերջին տասնամյակի ընթացքում գրեթե ամեն տարի լինում էին 8-9 եւ նույնիսկ 9-10 բալանոց ավերիչ երկրաշարժեր այն գոտիներում, որոնց վտանգավորությունը ԸՍՇ-78 քարտեզում նվազեցված էր առնվազն 2-3 բալով: Դրանց թվին են դասվում Հայաստանում 1988թ. Սպիտակի երկրաշարժը, Ղազախստանում 1990թ. Չայսանյան, Վրաստանում 1991թ. Ռաչա Ջավյան, Դրոզդստանում 1992թ. Սուլուսամիրական, Ռուսաստանում 1991թ. Կորյական եւ 1995թ. Նեֆթեգորսկի երկրաշարժերը: Ինչպես ցույց տվեցին հետագա հետազոտությունները, ԸՍՇ-78 քարտեզը իրականում ընդհանուր էլ չէր, քանի որ կազմվել էր մասնատված, տարբեր տարածաշրջաններում եւ հանրապետություններում, տարբեր մեթոդիկայով ու տարանջատված սեյսմոլոգիական եւ սեյսմաերկրաբանական նյութի հիման վրա: Այդ քարտեզի գլխավոր թերությունների մեջ մեթոդաբանական եւ մեթոդական թերմշակվածության հետ միասին հարկ է նշել առաջին հերթին դրա ստեղծման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների անմիասնությունը, որը ծագել է երկրի սեյսմավտանգ տարածաշրջանների եւ դրանց հետ կապված հարակից արտասահմանյան սեյսմակտիվ տարածքների անհավասարաչափ եւ անբավարար հետազոտության հետեւանքով:

1991-1996թթ. ընթացքում "Հյուսիսային Եվրասիայի սեյսմայնությունը եւ սեյսմիկ շրջանայնացումը" հիմնահարցի շուրջ անցկացված համալիր հետազոտությունների արդյունքում, Ռուսաստանի գիտության եւ տեխնոլոգիաների նախարարության ֆինանսական աջակցությամբ եւ Ադրբեջանի, Հայաստանի, Բելառուսի, Վրաստանի, Ղազախստանի, Դրոզդստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ռեպբլիկանի եւ Ռկրահնայի սեյսմոլոգիական եւ երկրաբանաերկրաֆիզիկական կազմակերպությունների մասնակցությամբ, ստացվել է միասնականացված ելակետային սեյսմոլոգիական եւ սեյսմաերկրաբանական նյութ Հյուսիսային Եվրասիայի ամբողջ տարածքի համար, որը թույլ է տալիս սկզբունքորեն նոր դիրքերից մոտենալ տարածաշրջանային սեյսմայնության կառուցվածքի ուսումնասիրմանը եւ պետություններից յուրաքանչյուրում սեյսմիկ վտանգի գնահատմանը: Ստեղծվել են ամբողջ Հյուսիսային Եվրասիայի տարածքում երկրաշարժերի օջախների ծագման գոտիների սեյսմատեկտոնական եւ սեյսմաերկրադինամիկական մոդելներ, բացահայտվել են տարածաշրջանային երկրադինամիկական գործընթացների տարածաժամանակային եւ էներգետիկական զարգացման որոշակի օրինաչափություններ, առաջարկվել են օջախային գոտիների սեյսմոլոգիական պարամետրիզացիայի եւ երկրի մակերեւույթին դրանց ստեղծած սեյսմիկ ազդեցության հաշվարկման նոր մեթոդական մոտեցումներ: Մասնավորապես, հայտնաբերվել է երկրաֆիզիկական միջավայրի եւ դրանում ընթացող սեյսմիկ գործընթացների կառուցվածքադինամիկական միասնությունը, որը կայանում է նրանում, որ լիթոսֆերայի բեկորաբլոկային կառուցվածքը եւ երկրաշարժերի օջախների համակցությունն ունենան միեւնույն կամ շատ նման ֆրակտալ չափականություն, ինչի մասին են վկայում այդ օբյեկտների տարածային եւ

ժամանակային բաշխումները:

ԱՊՅ մասնակից պետությունների սեյսմոլոգների համագործակցության այդ փորձը կօգտագործվի ՄՊՏԾ ՍՄՅ իրագործման ժամանակ:

Սեյսմիկ վտանգի գնահատման զարգացվող երկփուլային մոտեցմանը համապատասխան, առաջին՝ սեյսմատեկտոնական փուլում հայտնաբերվում են երկրաշարժերի օջախների ծագման գոտիները (ԵՕԾ գոտիներ), երկրորդ՝ ինժեներական փուլում հաշվարկվում է դրանց առաջացրած սեյսմիկ ազդեցությունը երկրագնդի մակերեւույթի վրա: Սեյսմիկ վտանգի քարտեզավորման երկփուլանի մոդելը եւ հավանականային մոտեցումը լայն կիրառում են գտել համաշխարհային սեյսմոլոգիայում հատկապես Կ.Ա. Կորնելի (ԱՄՆ) 1968թ. հայտնի հրապարակումից հետո: Դրա հետ մեկտեղ, չնայած նրա առաջարկած մեթոդաբանության բարձր կոնստրուկտիվությանը, Էական զարգացում ունեցավ գլխավորապես սեյսմիկ շրջանայնացման ուղղությամբ տարվող հետազոտությունների երկրորդ փուլը՝ երկրի մակերեւույթի վրա սեյսմիկ ազդեցության հավանականության հաշվարկը: Իսկ առաջին փուլը՝ օջախային գոտիների սեյսմոլոգիական չափագրումը եւ նույնականացումը, որը վերաբերում էր խորքային սեյսմաերկրադինամիկական գործընթացներին եւ սեյսմոլոգների ու երկրաֆիզիկոսների իրավասությանը, մնաց պակաս բովանդակալից եւ զգալիորեն սուբյեկտիվ:

Վերջին տարիներին ԱՊՅ մասնակից պետությունների սեյսմոլոգների կոլեկտիվի կողմից զարգացվող հետազոտությունների հիմքում նույնպես դրվում է երկփուլայնության սկզբունքը, որը հիմնվում է երկու փոխկապակցված կանխատեսումային մոդելների՝ օջախային գոտիների մոդելի (ՕԳՄ) եւ սեյսմիկ ազդեցության մոդելի (ՍԱՄ) վրա: Սակայն մոդելներից յուրաքանչյուրի կառուցումը եւ ֆիզիկական բովանդակությունը Էապես տարբերվում են նախկին մոտեցումներից: Այսպես, խոշոր ( $M \geq 7,0$ ) երկրաշարժերի օջախները ներկայացվում են ոչ թե արտարկտ կետերի տեսքով, այլ տարածական եւ կողմորոշված սեյսմոգեներացված կառուցվածքների ձեւով, որոնք արտացոլում են դրանց իրական բնույթը: Երկրաշարժերի էներգետիկ դասակարգման  $/\Gamma/$  հնացած գնահատման փոխարեն այժմ օգտագործվում են սեյսմիկ մոմենտների ( $M_0$ ) եւ մոմենտային մագնիտուդաների ( $M_w$ ) ժամանակակից սահմանումները, որոնց կիրառումը առավել շոշափելի եւ հուսալի է դարձնում խոշոր սեյսմիկ իրադարձությունների կրկնվողականության գնահատումը: Չգալիորեն բարձրացվել է միջավայրի եւ սեյսմիկ օջախների երկրաբանական կառուցվածքի եւ կայուն հատկությունների դերը: Կանխատեսումային սեյսմայնության մշակվող մոդելների հիմքում դրված է երկրաբանական կառուցվածքների, երկրադինամիկական գործընթացների եւ, համապատասխանաբար, երկրաշարժերի օջախների բնական հիերարխիան եւ ֆրակտալությունը: Սկզբունքորեն նոր քանակական պարամետրերի եւ դետերմինիստական կառույցների հետ միասին ամենուր ներմուծվում են այս կամ այն կառույցի անորոշության աստիճանը բնորոշող հավանական գնահատականներ:

Հետազոտություններն ընդգրկում են ամբողջ Հյուսիսային Եվրասիան, բայց մեթոդաբանական առումով առավել մանրամասնորեն անցկացվում են Կոպետդաղի տարածաշրջանի Ղրիմ-Կովկաս տարածքում, որը հանդիսանում է միջազգային տեստային փորձադաշտ գլոբալ սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդի (GSHAP - Global Seismic Hazard Assessment Program միջազգային ծրագիր) կատարելագործման համար: Այդ հետազոտություններին մասնակցում են Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Թուրքմենստանի, Ուկրաինայի, ինչպես նաեւ Իրանի, Թուրքիայի, Իտալիայի եւ Եվրոպական մի շարք երկրների սեյսմոլոգներ:

ԵՎ, համենայն դեպս, մինչ այժմ առավել բարդ եւ վերջնական լուծում չգտած խնդիրը մնում է սեյսմագեներացնող կառուցվածքների՝ ԵՕԾ գոտիների նույնականացումը, որի լուծումից մեծ մասամբ կախված են սեյսմիկ շրջանայնացման քարտեզների եւ, հետեւաբար նաեւ՝ սեյսմիկ վտանգի գնահատման հավաստիությունը եւ հուսալիությունը:

ԵՕԾ գոտիները ենթակա են երկարակյաց սեյսմակտիվ բեկումների երկրաչափությանը եւ ներառում են սեյսմագեներացնող կառուցվածքներ, որոնք, կախված էլակետային տվյալների մանրամասնությունից եւ հավաստիությունից, կարելի

Է բաժանել երեք տեսակի՝ լինեամենտներ՝ դրանց երկարությամբ շատ թե քիչ կարգավորված ձեռով տեղակայված սեյսմիկ օջախներով, պոտենցիալ օջախներ, որոնք սովորաբար զուգադիպում են լինեամենտների հատումներին կամ բեկումներին, դոմեններ՝ "ցրված" սեյսմայնության մոդելավորող բնագավառներ:

Սեյսմալինեամենտները սեյսմատեկտոնիկ մոդելների հիմնականախքն են եւ եռաչափ տարածությունում պատկերում են առավել խոշոր եւ համեմատաբար հստակ արտահայտված սեյսմակտիվ կառուցվածքները՝ ընդհանրացված տեսքով խորհրդանշելով դրանց առանցքը: Նրանք շրջագծում են տեկտոնիկ շարժումների համեմատաբար փոքր դիֆերենցումով երկրաբլոկները եւ հետագծում են առավել կոնտրաստային տեկտոնիկ ակտիվությամբ երկրաբլոկների միակցումները: Լինեամենտները նույնականացվում են հիմնականում դրանց երկարությամբ ձգվող՝ համապատասխան մագնիտուդայի երկրաշարժերի օջախների տարածաժամանակային տեղաբաշխման կլաստերային վերլուծության ճանապարհով, ինչպես նաեւ՝ ըստ երկրաֆիզիկական դաշտերի, ըստ կայնոզոյում (առավելապես վերին պլեյստոցենում եւ գոլոցենում) համանման պատմատեկտոնական զարգացման, ըստ քառորդական շրջանում ակտիվության, ըստ նեոտեկտոնական շարժումների արագության գրադիենտներին մոտիկ մեծությունների եւ ըստ Նորագույն ու ժամանակակից երկրադինամիկայի այլ հատկանիշների: Լինեամենտային կառուցվածքների եւ խզվածքների ժամանակակից զարգացման ռեժիմի ուսումնասիրության համար առանձնահատուկ նշանակություն ունի դրանց հետ կապված խոշոր պալեոերկրաշարժերի թվագրումը:

Փոխազդող երկրասալերի չափերը վերահսկում են լինեամենտային կառուցվածքներում երկրաշարժերի մագնիտուդայի ( $M_{max}$ ) վերին սահմանը, իսկ դրանց քանակը, կարգը եւ տեկտոնիկ տեղաշարժերի հաճախականությունը՝ տարածաշրջանի սեյսմիկ ռեժիմը: Սեյսմոգեներացնող կառուցվածքների նույնականացման եւ դրանց սեյսմիկ պոտենցիալի գնահատման համար կարելու է նշանակություն է ձեռք բերում տարբեր մագնիտուդայի երկրաշարժերի օջախների քարտեզագրումը՝ դրանց չափերին ու կողմնորոշվածությանը համապատասխան: Երկրաշարժերի պոտենցիալ օջախների ( $\tau_{\text{ՊՕ}}$ ) տեղակայությունը, սեյսմատեկտոնիկայի (հատվածքներ ու խզվածքների գալարներ եւ այլն) վերլուծության հետ մեկտեղ ճշտվում է որոշակի մագնիտուդայի իրադարձությունների առավելական միջեպիկենտրոնային հեռավորությունների մեթոդով՝ պատկերների ճանաչման ճանապարհով եւ այլ միջոցներով: Քանի որ բնության մեջ գործնականում գոյություն չունի ոչ կառուցվածքային սեյսմայնություն, ապա լինեամենտում  $M_{max}$ -ի մեծության ներքին մակարդակը կարող է լինել ցանկացած, ինչը կախված է սեյսմոլոգիական եւ սեյսմատեկտոնիկ կառույցների ճշտությունից: Ընդհանուր սեյսմիկ շրջանայնացման համար այդ մեծությունը սովորաբար ցածր է, քան  $M_{max} = 6,0$ : ԸՍՇ ժամանակ դոմենային կառուցվածքներին վերաբերում են  $M < 5,5$  երկրաշարժերը, քանի որ ԸՍՇ համեմատաբար փոքր մասշտաբում դժվար է հայտնաբերել այդպիսի լինեամենտները: Դետալային շրջանայնացման (ԴՍՇ) դեպքում, կախված ինդիքներից, այդ մակարդակը կարող է զգալիորեն նվազել, օրինակ՝ մինչեւ  $M = 4$  եւ ցածր:

ԵՕԾ գոտիների բոլոր հիմնական կառուցվածքային տարրերը (սեյսմոլինեամենտներ, դոմեններ եւ պոտենցիալ օջախներ) քանակապես չափագրվում են համապատասխան տարածաշրջանների սեյսմիկ ռեժիմին եւ դրանցից յուրաքանչյուրում սեյսմիկ իրադարձությունների տեսակարար հոսքին համապատասխան եւ, ինչպես բոլոր մյուս տվյալների բազան, ներկայացվում են տեխնոլոգիաների աշխարհագրական տեղեկատվական համակարգում՝ (ԱՏՅ-տեխնոլոգիաներ) առանձին էլեկտրոնային շերտերի տեսքով: Երկայնական օջախներով օջախային գոտիների մոդելին հարմարեցված սեյսմիկ էֆեկտի մոդելի /ՍԷՄ/ համար մշակված ծրագրամաթեմատիկական ապահովման հիման վրա տարվում է տարբեր հաճախականության (բալերով եւ/կամ առավելագույն արագացման միավորներով) սեյսմիկ ազդեցությունների հաշվարկ, նշվում է տրված ժամանակահատվածում միջին բնահողային պայմաններում դրանց ծագման հավանականությունը:

Կարող են առաջարկվել նաեւ այլ մոտեցումներ սեյսմագեներացնող կառուցվածքների նույնականացման եւ դրանց սեյսմիկ վտանգի, այդ թվում նաեւ՝

լիթուսֆերայի վրա ակտիվ տեխնածին ազդեցության շրջաններում, գնահատման հարցերին:

Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, երկրաֆիզիկական միջավայրի ֆրակտալ շերտաբլոկային կառուցվածքը կանխորոշում է դրա հատուկ հակազդեցությունը երկրադինամիկական իրավիճակի փոփոխություններին: Այսպես, եթե արտաքին երկրադինամիկական ազդեցությունները թույլ են, ապա տարածաշրջանում սեյսմիկ ռեժիմը քվազիստացիոնար է եւ բնութագրվում է թույլ երկրաշարժերի քառասյին առաջացմամբ: Հարկադրող ուժերի ուժեղացման դեպքում, օրինակ՝ խոշոր սեյսմիկ կամ սողանքային տեղաշարժերի արդյունքում, սեյսմաերկրադինամիկական համակարգը անցնում է որակապես նոր եւ ավելի կազմակերպված վիճակի: Նրա անհավասարակշիռ միջբլոկային կարերում ծագում են ինքնակազմակերպման երեւոյթներ, եւ ձեւավորվում են կառուցվածքայնորեն կայուն ձեւախախտումային ալիքներ, որոնք տարածվում են խզվածքային գոտիների երկարությամբ զգալի տարածություններ եւ որոշիչ դեր են խաղում խոշոր երկրաշարժեր առաջացնելու գործում: Ձեւախախտումային ալիքների հետ է հավանաբար կապված, օրինակ, վերջին երկու տասնամյակների ընթացքում դիտվող սեյսմիկ ակտիվացման միգրացիան, որը Արեւելյան Թուրքիայում, Հյուսիսային Իրանում, իսկ հետո նաեւ Կովկասում մի ամբողջ շարք ուժեղ երկրաշարժերի հետեւողական առաջացման պատճառ դարձավ: Համանման միգրացիոն գործընթացներ են այժմ տեղի ունենում Կենտրոնական Ասիայում: Այս բնագավառում ՍՄՄԸ Ծրագրի ուղղությամբ տարվող համատեղ հետազոտությունները կարող են նպաստել սեյսմիկ վտանգի երկարաժամկետ կանխատեսմանը եւ դինամիկայի նոր տարրեր կներմուծեն սեյսմիկ շրջանայնացման գործում:

ԱՊՀ մասնակից պետությունների տարածքների ընդհանուր սեյսմիկ շրջանայնացման նոր՝ միջազգային ստանդարտների հետ համատեղելի քարտեզը պետություններից յուրաքանչյուրում կարող է դրվել սեյսմիկ վտանգի շրջանայնացման իրենց ազգային նորմատիվ քարտեզների հետագա կատարելագործման հիմքում, որոնք անհրաժեշտ են տարածքների սոցիալ-տնտեսական ու էկոլոգիական խոցելիության գնահատման, ռացիոնալ հողօգտագործման, սեյսմակայուն շինարարության եւ սեյսմիկ վտանգի նվազեցման համար:

Հետազոտություններն իրականացվում են սեյսմիկ վտանգի գնահատման եւ սեյսմիկ շրջանայնացման համակարգող կոմիտեի (ՍՎԿ) կողմից, որի կազմի մեջ մտնում են ԱՊՀ բոլոր մասնակից պետությունների մասնագետներից կազմված փոխկապակցված աշխատանքային խմբեր, եւ որը (ինչպես եւ աշխատանքային խմբերը) գլխավորում է որոշակի ժամանակով ընտրված նախագահը: Աշխատանքային խմբերը /ԱԽ/ միավորում են մասնագետներին ըստ հետեւյալ թեմաների՝

